

ԻՐԱՎՈՒՅՑ

Rev Péré G. Kalemkarian Michitaris
te ngasse N° 4 Vienne

ԻՐԱՎՈՒՅՑ ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ համար Տարեկան 12 փր.
» » Վեցամսեայ 6 փր.
Արտասահմանի համար (Երկու փոխ մեկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.
Անդրկալի » 2.60 տոյ վեցամսեայ 1.50

ԿԱՆԻՒԻ ՎՃԱՐՆԼԻ

Համակ դրամ եռայն դրկեղ հետեւեալ հասցեով

ԽՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՅՑ» ԼՐԱԳՐՈՑ. — ՎՍԻՆԱ (Պուլկարիա)

Редация на ВѢСТНИКЪ

„Ирaвункъ“

ВАРНА (България)

Rédaction du journal

„Iraounk“

V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն դրկուիր եւ յարմար դատաւար-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ.
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեկ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

Կը խնդրուի մեզ պարտք
ունեցող բաժանորդներէ որ հաճին
ընդիշտ դրկել իրենց բաժնեգիրն
ներքէ արդէն իշխանական երկտո
դերով ազդարարած ենք. հետեւ
աւարտ ալ պէտք չէ յապաղեցնել,
անա տարին ալ կը լրանայ:

ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆ

Այս ամիսը որ կողմը որ երթանք
կը տեսնենք թէ համարային գործե-
րը վարող մարմիններ ու պաշտօն-
եաներ որոշեալ ժամանակամիջոցի
մը մէջ իրենց գործառնութեանց
հաշիւը տալ պարտաւորուած են:
Սահմանադրական պետութեանց
նախարարութիւններէն սկսեալ մին
չեւ կիսովայրենի ազգերու պաշ-
տօնեաները իրենց գործառնու-
թեանց համար պատասխանատու
են պետի մը կամ բարձրա-
գոյն մարմնոյ մը: Եւ այս համա-
րառութեան ու համարատուութեան
չնորհիւ է որ համարային պաշտօ-
նեան ճակատագրաց կը ներկայանայ
իր շրջանակի ամեն խաւերուն.
կը ճանչնէ անոնց իրենց պարտա-
կանութիւնները եւ իր իրաւունքը,
ժողովուրդն ալ փոխադրութեամբ
կը յարգէ այդ պաշտօնեային ծա-
նը, վստահ ըլլալով թէ՛ օր մը
ալ ինքը կամ իրմէ ընտրուած
մասնախումբ մը անկէ հաշիւ պի-
տի պահանջէ եւ պաշտօնէին մէջ մի
գործին համար բացատրութիւն
պիտի ուզէ:

Համարատուութեան ու համարա-
տուութեան այս փոխադրած կա-
պին չնորհիւ է որ ահագին պե-
տութիւններու եւ միլիոնաւոր ժո-
ղովուրդներու հանրային գործերը
լարուած ժամոցոյցի մը պէս կա-
նոնաւարութեամբ կրնան:

Բնական է որ Հայերս ալ այս
տիպեղանակն օրէնքէն բացառու-
թիւն չպիտի կազմէինք մեր հան-
րային գործերու մէջ: Մեր ազ-
գային պաշտօնեաները, Պատրի-
արք, Վարչական Ժողովներ, Խոր-
հուրդներ, Թաղականներ, հոգա-
բարձուներ, տնօրէններ ու հաւա-
քիչներ, ամենն ալ իրենցմէ աւե-
լի բարձր մարմնոյ մը, եւ բարձ-

րագոյն մարմինն ալ ժողովուրդէն
ընտրուած երեսփոխանական ժո-
ղովին հաշիւ տալու պարտաւոր-
ուած են:

Բայց պուլկարիա գաղթական.
նութիւնը այս ընդհանուր օրէն-
քէն ժամանակին չեղում մը ունե-
նալով՝ որ անշուշտ երկրին քաղա-
քական փոփոխութենէն առաջ ե-
կած է, այսօր գրեթէ բոլոր
վին կորսնցուցած է համարատու-
թեան ու համարատուութեան գը-
րութիւնը: Թաղականներ եւ Հա-
գաբարձուներ ունինք ամեն հայա-
բնակ քաղաքի մէջ. անոնց շատե-
րը տոսնեակ տարիներէ ի վեր ա-
նընդհատ պաշտօն կը վարեն, կառ-
նեն ու կուտան, առանց համարա-
տութեան եւ համարատուութեան,
այնպէս որ ժողովուրդը չը գիտեր
թէ սրբափ հոգնեն եւ սրբափ կու-
տան, ինչ եղանակաւ կը գտնան
ու ինչ կերպ կը մատակարարեն:
Օր մը չէ տեսնուած որ Թաղ-
խորհուրդ մը իր հաշուեցուցակը
եւ գործառնութեանց տեղեկագիրը
ու եւ կերպով ժողովուրդին ներ-
կայացնէ:

Ահա այս պատճառաւ ալ ժողո-
վուրդեան մէջ մերթ ընդ մերթ խու-
ղժգոսնութիւններ ու խժբժումներ
կը լսուին, որոնց հետեւանօք թա-
ղական եւ հոգաբարձու ոտնալ դը-
ժուարութեանց կը բախին, տուր-
քեր հաւաքելու եւ նպաստելու ըս-
տանալու մէջ:

Անցեալ օր բազմահայ քաղաքէ
մը մեզ գեղեցիկութեան գիր մը
հասաւ, որ կը ջանար ապացու-
ցանել թէ տեղւոյն Թաղ. Խոր-
հուրդը տասնեակ տարիներէ ի վեր
մէկ կամ երկու գերագատանի մե-
նաշնորհը եղած է. այս շրջանին
մէկ եղբայր, միւս շրջանին միւս
եղբայր, փեսան կամ խնամին
ընտրել տալով, եկեղեցի ոյ ու դըպ-
րոցի գործերը միայն իրենք կը
վարեն եւ ժողովուրդը բոլորովին
անգիտակից կը լինայ անցած դար-
ձածին. այս պատճառաւ ալ տղ-
դին խել մը պահանջները երկար
տարիներէ ի վեր դանձելի կը մը-
նան. որովհետեւ պարտապանները
նոյն գերդաստանի անդամներէն
ըլլալով, խաբրի չեն ուզեր դըպ-
չիլ եւայլն եւայլն:

Այս կարգի խժբժումներու ճըշ-
մարտութիւնը փնտռել տեղի մեր
ուշադրութիւնը կը դառնայ այն
կէտին թէ՛ թաղականներու եւ հո-
գաբարձուներու առջեւ ելած խո-
չնդանները շատ անգամ այդ պատ-
ճառաւ կը բազմապատկուին, եւ
երբեմն անոնց լայլը կը կասեցը-
նեն, թէ եւ մենք մեր արդի թա-
ղականներու վրայ անփութահոգի են
ունենալէ հեռի ենք. բայց եւ այն
պէս ժողովուրդի գոնէ մէկ մասէն
եկած տեղի կամ անտեղի խժբը-
ժումներուն առջեւն առնելու հա-
մար կը փափաքենք որ Պուլկարա-
հայ ազգային պաշտօնեաներն ալ
հետեւին «համարատու» ընդհա-
նուր դրութեան, որ ըստ ինքեան
խթան մը կըլլայ ժողովուրդին
պարտքը ճանչնելու, երբ ատով
իր իրաւունքը կը յարգուի:

Մեր թաղականները կրնան ա-
ռարկել թէ իրենք համարատուու-
թենէ խոյս չեն տար եւ շրջանին
լրանալուն պէս նորընտիր թաղա-
կանութեան կը ներկայացնեն ի-
րենց հաշիւները: Բայց ժողովուր-
դի գեղեցիկ մասը այս առարկու-
թեան կը պատասխանէ թէ՛ նորե-
րն ալ հիններէն կամ անոնց մօտ
ազգականներէն կը բաղկանան, եւ
հետեւեալ համարառու եւ համա-
րատու կրկին միեւնոյն մարդիկը
կըլլան, որով հասարակութիւնը
անգիտակից կը լինայ անցած դար-
ձածին:

Որովհետեւ մեր ազգային հա-
տատուութեանց բարեկարգութիւնը
եւ գործերուն կանոնաւոր ընթաց-
քը ժողովուրդի ամեն դասակար-
գին համեմատութեանը կը կարօ-
տին, մեր Ազգային պաշտօնեա-
նութիւնները ալ պարտաւոր են, ամեն
բանէ առաջ, ժողովուրդին գեղե-
ցիկութեան պատճառները վերցնելու
համար ուշադրութեան առնել հա-
մարատուութեան արգար պահան-
ջը:

Պոլսոյ եւ գաւառներու մէջ թաղ-
խորհուրդները իրենց հաշիւները
ամէն տարի ճշտեալական Խորհուրդ
ներուն ներկայացնելու ու վարչա-
կան ժողովին վաւերացնելու տալէ
զատ, հաշուեցուցակ մըն ալ եկե-
ղեցւոյ գաւիթը կը կախեն. հը-
րուէր կարգաւոր ժողովուրդին որ

15-20 օրուան պայմանաժամի մէջ
իր գիտողութիւնները ընէ, եթէ
ունի:

Մինչդեռ Պուլկարիոյ, նոյնպէս
Ռումանիոյ թաղականները եւ հո-
գաբարձուները բարձրագոյն մար-
մնոյ մը առջեւ հաշիւ չը տա-
լէ զատ, գոնէ մինչեւ ցարդ սո-
վորութիւն չեն բրած ժողովուր-
դին ներկայացնել իրենց տարեկան
գործառնութեանց հաշիւները ու
տեղեկագիրները:

Այս երկու երկիրները քանի որ
չունին ազգ. վարչական կազմա-
կերպութիւն, պաշտօնեաներն
վրայ հսկող ժողովուրդը պէտք է
նկատուի. սա է որ իր շարունակա-
կան նուէրներով եկեղեցին ու
վարժարանները «չեն» պահել կը
լանայ. ուստի իր անբաժարելի
իրաւունքն է իր տուած նուէրին
ու տուրքին ո՛ր երթալը գիտնալ.
հինգ սանթիմ տուողը այս իրա-
ւունքը ունի, զոր պէտք է յար-
գել:

«ԹԻՒՐԿԻԱ ԻՆՉՊԼԻՍ ԿԸ ՓՐԿՈՒԻ»

Ասկէ առաջ «Իրաւունքի» 7երդ
թուոյ, Տաւատ Մահմուտ փաշա-
յի Հայերու ուղղած կոչին ի պա-
տասխան առիթ ունեցանք ըսելու
թէ, չենք կրնար ընդունիլ մեր
Թուրք հայրենակիցներուն հրաւե-
րը եւ գործակցիլ իրենց հետ, մի-
եւնոյն ատեն ցոյց տալով բանաւոր
պատճառները եւ տեղում մ'ալ շեշ-
տելով Երիտասարդ Թուրքերու
կողմէ Թուրքիան փրկելու համար
ընդգրկուած ծրագրին Տաճկաստա-
նի համար անբաւականութիւնը եւ
կողմնակալ խմբադրութիւնը:

Մեր նախորդ տեսութեան մէջ
պարզած էինք թէ Թուրքիոյ վրէ-
ժական եւ տեւական փրկութիւնը
այդ երկրի բնակչութեան հաւա-
սարապէս գոհացում ստանալէն կա-
խում ունի:

Թուրքիոյ ապագային կրելիք
որ եւ է մէկ փոփոխութիւնը եւ
կամ անոր կացութիւնը փո-
խելու համար ձեռք առնուած ո-
ր եւ է մէկ ծրագրի գործադրութիւ-
նը, Տաճկաստանի ազգաբնակու-
թեանց մանաւանդ մեր հայոց ճա-

կատարին հետ սերտորէն կապուած ըլլալով աւելորդ չենք տեսներ քիչ մը աւելի որոշ պարզել մեր տեսութիւնը թուրքիոյ փերկութեան դործին նկատմամբ:

Այսօր յէօն-Թիւրքերու կողմէ երկրին փրկութեանը համար միջոց նկատուած Միտհաթի սահմանադրութեան ոգին, անգոհ հացուցիչ ու նոյն իսկ ներկայէն աւելի երկրին քրիստոնեայապաշտանութեանց համար աննպաստ ըլլալը նախապէս «իրաւունք»-ի 37-րդ թուով «Թիւրք Սահմանադրութիւնը» վերնադրով գրութեամբ մը բացատրած ենք:

Թուրքիոյ փրկութիւնը այդ երկրին բազմացեղ եւ կրօնքով ու բարքով իրարմէ խիստ տարբեր տարրերուն համերաշխ մտայն կախում ունի եւ այդ փրկութեան վճռակոծութիւնն ալ համերաշխութեան տեսակետով ենէն:

Իսկ ծանօթ ճշմարտութիւն մըն է թէ համերաշխութիւնն ալ այն ատեն կրնայ տեսական ըլլալ երբ փոխադարձ պարտքի եւ իրաւունքի սկզբունքները լայնօրէն կրմբունին եւ անպայման կերպով կը յարգուին:

Միտհաթ փաշայի Սահմանադրութիւնը այդ առաւելութենէն զուրկ է, քանի որ իշխող մտեւանդ զեղծ գերադոյն մեծամասնութեամբ մը եւ հեղինակութեամբ ամենուրէնք գէժ առ գէժ պիտի բերէ քրիստոնէին հետ:

Բարեկարգ Միտհաթութիւն մը երբ ալլասեաւ տարբերութիւն մէջ անկողնակալ դեր մը կատարելով համերաշխ կը պահէ զանոնք, ան համեմատ գնահատելի է եւ օգտակար երկրին ու ժողովուրդին, քան Միտհաթ փաշայի Սահմանադրութիւնը:

Մէկէ աւելի օրինակներ ունինք աշքերնուս առաջ այն պատիկ ազգերէն, որոնք առանց ներքին որոշ եւ լայն ինքնավարութիւն մը ունենալու, Սահմանադրական խորհրդարանական ձեռով կառավարութեան մը տակ կապին իրենցմէ բազմաթիւ ազգի մը հետ, թէնէ կրօնակից, այդ պատիկներուն կենտրոն յարատեւ եւ յարաճուն կռիւններու ու պայքարներու շարք մը եղած է:

Աւստրիոյ ազգաբնակչութեանց կարեւոր մասը կազմող փոքրիկ ժողովուրդներու յաւիտենական կըռիւր ինքնապահպանութեան համար եւ լինդիոյ մէջ իսլամադէոսք վիճակը տկնայտան իրողութիւնն էր եւ պիտի մնար վրէժներ են:

Այդ տեսարանները առաջ կուգան Աւստրիոյ ու լինդիոյ մէջ, երկրներու որոնք Տաճկաստան չեն եւ ազգեր որոնք Քրիստոնեան յաւիտենական շահագործելու սահմանուած տարր մը նկատող քրիստՉէքէլ եւ Լադեր չեն:

Տոմատ Մահմուտ փաշայի փափքած թուրքիոյ փրկութիւնը, այն ատեն միայն կարելի կըլլայ, երբ հոն բնակող ամեն ազգ ներքին կատարելով ինքնավարութեամբ մը իրարմէ տէր ըլլալ իր սեփական ուժերուն, պարտքին, իրաւունքին ու ծննդավայրին: Ու այդ ինքնավար ցեղերը կուգան ձեռք ձեռքի տուած ամբողջութիւն մը կազմել, ինչպէս կը տեսնենք Գերմանիոյ մէջ, ուր տասնեակ տնկալ ազգեր գոյնակցելով կազմած են Գերմանական հրդար կայսրութիւնը:

Եթէ այսօր յէօն-Թիւրքերը ընդունին որ, անկախ Հայերու ինքնագործ Մակեդոններու եւ այլոց դաշնակցութեամբ Օսմանեան կայսրութիւն մը կազմուի, — պայմանաւ մը որ այս ամենք ի հարկին իրարու գոյութիւնը եւ երկրին ամբողջութիւնը պահելու համար տրամադրելի ըլլան իրենց ուժերով — այն ատեն թէ թուրքիոյ փրկութիւնը

կութիւնը վճռական եւ տեսական կըլլայ, եւ թէ յէօն-Թիւրքերը իրենց հետ կունենան գործակից ոչ միայն Հայերը այլ հաւանաբար Մակեդոններն եւ ուրիշներ ալ:

Եթէ այս փրկարար գրութիւնը Պաշա Ալին եւ կամ Սուլթանները կանուխէն ընդունէին, այսօր Ռուսական, Սերպիական, Մակեդոնական, Պոլսական, Կրէական եւ Թունաստանի հաճիկ կայսրութեան գոյնակից մասերը պիտի կազմէին:

Համարեալ ռաւակալութիւնը մեր ներկայ կապանիւ, իսկ Միտհաթի Սահմանադրութիւնը մեր ապագային կապանայ լրջօրէն:

Սոսիմ

ԱՆՁԱՏ ՆԻԹԵՐ

Բարեկի Յուդաիզմի տեսութիւնը իրարու յաջորդող համազգային ժողովներու մէջէն, խաղաղութեան ժողովն է որ զմիշտ կը շահագործէ. ուր զօրացող ժողովուրդներու իրաւանց դատը օրակարգ ունի, ուր խմբուած մարդիկներ, հեռու շահանդրութենէ, հեռու փոռասիրութենէ մէկ նպատակ ունին. — Աշխարհի խաղաղութիւնը:

Այն օրը եւր այդ մեծ մարդոց սուրբ գաւառները յաջողութեամբ պատկուի, այն օրը միայն հաւասարութեան, եղբայրութեան ու ազատութեան գոյնակի պիտի ծանին ուր որ մարդ կայ:

Գաղղիոյ վաճառականութեան արդի նախարար Միլլերանի նախագահութեամբ խաղաղութեան համազգային ժողովը բացուեցաւ. այս առթիւ արտասանուած ատեն նախօրէին հեռուէն հեռու, դժբաղդ ու յուսահատ ժողովուրդներու փրկութեան յոյս մը կը ներշնչեն:

Խաղաղութեան պատգամաւորներ՝ տառապեալ հայ ազգին ներկայ ողբալի կացութիւնն ալ ինք կատի առնելով, կոչում կընեն ազգերու, կը դիմեն հասարակաց կարծիքին, կը հայցեն կառավարութեանց միջամտութիւնը հայկական դատի նկատմամբ, ու հայոց նպատաւոր կոչնագիր մը (°) կը բուժարկեն:

Հրապարակագիր Վիրապետ կի. ներսն մէջէն Տիկին Սէվէրինն է որ մեզի կը հիշցնէ. ու կրնայ մեր խոցուած սրտերուն սպեղաւնին ըլլալ:

Հայկական դատին նկատմամբ իր արտասանած բառերով մի. թարութեան ու վերածնութեան շունչ մը կը սփռէ ամենուս, կը տորածներէ մեռած Հայերուն իր օրհնութիւնը կուտայ:

Ի պատիւ Խաղաղութեան համազգային ժողովին, Բարեկի քաղաքակրթութեան կողմանէ տրուած հոցկերթիւն ի ներկայութեան երկսեռ պատկառելի բազմութեան մը, տիկին Սէվէրին բաժակն ի ձեռին կըսէ:

«Կը խմեմ կենացդ շօրչորեալ «Հայաստան». հարկը անգամ աւերելով խմեմ, հարկը անգամ «վերածնուած, իսկ այսօր Եւրոպայի վատութենէն բարբարոսն երբեք չգնահատեմ ես. կը խմեմ «այն Հայաստանի կենացը, որոյ «կիններ ի Սասուն, մահը ընտրեցին քան զամօթն, ու զաւակներ. «նին մերկ կուրծքերուն վրայ»

(°) Կոչնագրին հայոցս վերաբերեալ մատը մեր Կ2 թիւին մէջ արդէն հրատարակած ենք:

ԽՍԲ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՆԵՐ [26]

(ՊԱՅՄԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՎԱՐԱՆԱՆԻ ԻՐԱՎԱՆ ԿԵԱՆՔԵՆ)

«Սիրելի Տատիկ» (°)

Երկու ձեռքերդ կարօտով համբողջել ետք, ձեր եւ Շուշանիկի քէֆը կը հարցնեմ. Աստուծով ողջ եւ առողջ էք: Սիրելի տատիկ, եթէ գտնող կը հարցնէք, ես ալ ողջ եւ առողջ եմ, բայց զարեպ արտիկա տարալի է. գիշեր ցորեկ լալով կանցնեմ: Սիրելի խորոզէր (հօրեղբայր)՝ Կրկու երեք շաբաթ առաջ ձեր Կենտրոն կարօտովը մեռաւ: Ես առանց տէր ու տիրականի, ճնշողութիւն, միշտակ մնացած եմ: Սիրելի տատիկ, կը խնդրեմ որ, դուք շատ չի լաք ու չի տըրտմեք. ինչու որ ես ձեր կողմէն ու իմ կողմէն շատ լացի ու կոթուեցայ: Աստուծոյ կամբ օրհնեալ լինի, ինչ կրնանք ընել: Միշտակ պէտք է խամբերենք (համբանենք): Ես ալ վարժատու շէն ելած եմ, կը յուսամ աղէկ գէշ գործ մը գտնել, անհոգ եղէ՛ք, ձեզի չեմ մտածար: Տատիկ կարելի է որ, փողիցածին քիչ օրէն գայ մի արտերը ծախէ, ու ձեզի ալ ներգութիւն տայ, որքան կրնաք գէժ կեցէք եւ տունէն պարեմ (գտնէ):

(°) Բաղէլի շրջակայ գիշացիներ հօրեղբոր կողմ տատիկ ունեւ «Տատու» կրտսեմ, իսկ քու դաքացիները «Տատու» կը կոչեն:

Կույս մի՛ երէք: Ես ձեզի կօչնեմ, եթէ Աստուած յաջողէ:

Զերը վշտայի որդի ԳՈՒՐԳԵՆ

«Ղարիպի սեւ թուղթը», որ հայ գիւղական կեանքի ամենէն տխուր մէկ երեւոյթն է, իր դարիպներէն սեւ բոթը կը նշանակէ: Եստ որսածմիկ ու ողբերգական է: Եթէ մէկմէկու կատարի բարեութեան մը միջոցին անիծեն գեղջուկ կիները, իրենց էն ծանր անէ՛քը «Ղարիպէդ սեւ թուղթ առնես, ճուրակ մ'գորդ կտրես, սեւ չալմա կապես» բանաձեւով կը վերջանայ: Եսնէն սեւ թուղթը բոլորովին կը սեւցնէ Սանամի անմիխթար սրտիկը: Բոլոր գիւղացիները կը ժողվին, Գիւղենցի նահապետական տան գորտուր «օճախին» շուրջ: Կնիկներ զոռ ու այրեր առանձին, խմբովին կը նստին, այդ սգացող լալկան խումբերը: Սանամ խաթունի ու Շուշանիկի աղիողորմ լացին ու հառաչներուն ընկերացած, կույսն զառնագին: Հայ գիւղացին իր կեանքի ու հոգեբանութեան ամենէն կոզմիկ եւ ամենէն բարձր յատկանշական կողմերն ունի. իր ընկերական ու բարեկամական պարտականութեանց մէջ: Մահ. հարսանիք, տխրութիւն, ուրախութիւն, ամենէն յետին գիւղացին պատահած միջոցին, ամբողջ գիւղը, առանց բացառութեան, մասնակից է անոր: Այսպիսի ծանր պարագաներուն, անձնական ամեն սիրելի ու նկատումները տեղի կուտան. ու հայ գիւղացին իր պարգեթեամբ ու անկեղծութեամբ՝ մտքի ու սրտի ա'յն քան լայնութիւն ու անարատութիւն ցոյց կուտայ ընկերական ու բարեկամական պարտականութեանց մէջ, այնքան անձնուէր ու անկեղծ է, որքան պարզ ու անարատ իր կեանքը:

Դեռ Սանամի ու Շուշանիկի սուգի օրերը չի վերջացած, դեռ անոնց կտրած ծառերը (մազերը չը բուսած, հոգէտ հրեշտակի պէս, Խաղաղանց հաճի փրկապտղ՝ իր սէնէթներով վալի փաշայի բացարձակ հրամանաւ, գործադիր ոստիկանութիւնը հետն առած գիւղ կուգայ: Առանց երկար բարակ ձեռակերպութեան, Գիւղենցի արտերն, պրակներն ու հողերը կը գրաւէ. իր կողմէ զանոնք ուրիշ մը կը յանձնէ, իր հաշուոյն մշակելու: Իր 6,000 դուրուշ՝ առկոսի ստիկանով բաղադրուած ու յարգուած անտիքի տեղ, այդ «նին օճախ» իր չոր հողերը գրաւել բաւական չի սեպել միծաղատի հաճի աղան. միտք կը գնէ Սանամի բնակած տունն ու յափշտակել: այդ այրի կիներն ու որբաշիկը բոլորովին փողոցներ ձգել: Սանամի ու Շուշանիկի աղիողորմ լացը, ամբողջ գիւղացիներու աղիքի հետ վերջապէս, կը կապեցնեն մեր ամենաողորմած Հաճի Փօլիսահին իր բարեկութենէն, ու միշտի բարեբարութեն այդ քանդուած օճախի արտերի տիկեր ու պրակները գրաւելով կը բաւականանայ որոց ալ մէքը՝ իր պահանջի կրկնապատկը կը կազմէր: Սանամի ու Շուշանիկ, իրենց սեւ գերաններու ներքեւ, հօրենական օճախին մօտիկ բողբոջին մերկ ու խեղճ կը ծուարին, իրենց յոյսն ու ապաստանն իրենց փայլ գնելով:

Մինչ Հայրենի գիւղի մէջ, Պապենական օճախին մօտիկը, այս ամենալայնագ զրկողութիւն ու անսիրտ հարստահարութիւնը տեղի կունենար, Գոյրգէն ա'յդ ամենէն անաւերեակ, պաշտօնի մը կը հեռամտի. իր մօքի կարողութեան շնորհիւ՝ կը յաջողի մէկ քանի տեղ այցելու գաւառականութեան գործը ձեռք բերել. իր գաւառնա-

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

«սեղմած նետու հցան մահուան ան
գունդը»

Եթե արդար լինէր շատ հեռու
անակնկալ ժողով մ'ալ տեղի ունե-
ցաւ Բարիկ ինկած կանանց խնդի-
րն ալ խնդիրներու օրակարգը ան-
յո՞ւր չէր :

Յրահասկան մամոյն ծանօթ,
իգական սեռին ազատագրութեան
գինուոր պիւճախս կիներ, «անկ-
նայ կանանց» պաշտպանութեան
հոգը կ'ստանան : Գլխավորներու
միջոց շրջող հանրակիներու գլխու-
նէ ալ մի քանի գրագիտուհի
տիկիներու իմաստասիրութեան
նիւթը :

Տիկին Ավրիլ իրական սեռին
անկման պատասխանատու կը բա-
նէ արու սեռը : Եստակ ալ ինչ է ե-
ղեր կանանց յոռութեան հրապո-
րիչը : Նշովք, անէծք մեր սեռի
գլխուն, Տիկինը չ'իմայր մեզ ա-
նուանելու անպիտանութեան գահի՞ն
ներ :

Կոյս աղկանց կամ աղատ կի-
ներու անկման արգարացի կամ ա-
նարգարանալի պատճառներուն ման-
րամանութեան մէջ մտնել չ'իմ ու-
ղեր : Եստ մեծ միտքեր ալ դե-
գեկան խնդրով դառնալ են արդէն :

Այդ դատակարարի կանանց լա-
րիւրի գոտին մէջ, վիթխոր հեւկօի
թիւրութեամբ քանթիին նման կին մը
գոցէ դռնուր բայց վերջին օրերս
ի Բարիկ ուղանալով Լուիս Օկիս
թիւր նման գարշելիներ շատ կը
գտնուին :

Հասարակաց փոսին մէջ անգամ
մը ինչպէս կ'ըսէին մը համար, վե-
րականգնում չ'կայ ալ եւ : Կին
մը ալ փոսին եզրը դեռ չ'հասած
աղքին առջեւ բերելու է իր սեղան
մանկէ անկուսը :

Ս. Ա.

Ռուսիո՝ Հանրային կրթութեան
նախարարութիւնը յայտարարած է
թէ, Հայոց թիմական հոգեւոր դպ-
րոցներու և Փետրղեան Ճեմարանի
ուսուցիչները իրաւունք չի
պիտի ունենան Հայոց եկեղեցա-
կան ծխական ուսուցիչներու
մէջ դաստաւարութիւն ընելու և թէ
գինուորական ծառայութեան ալ ա-
զատ չի պիտի ըլլան : Ռուս հան-
րային կրթութեան նախարարու-
թեան սոյն յայտարարութեամբը
վերաբերող վարժարաններէ շրջա-
նաւորաւ ըլլալով ուսուցչութեան
պաշտօնի մէջ գտնուողները բացը
կը մնան և տանցմէ միայն ու-
նե՞ք պիտի պահուին պաշտօնի
մէջ որ իրենց օգտակար ծառայու-
թիւններով Ռուս պետութեան
աչքին զարկած են :

—Կարնոյ նախկին տառնորդ
Տ. Ղևոնդ Եպիսկոպոս Շիշմանեան
որ Երուսաղէմի վանքը արքայաւոր
է ձեռնարկեր է Երուսաղէմայ Ս.
թոռին բոլոր Պատրիարքներու
պատմութիւնը պատրաստել :

—Ատրպատականի (Պարսկաս-
տան) տառնորդ Տ. Սահակ Եպիս-
կոպոս Ալիստեան կանոնագիր մը
պատրաստած է որով ընդհանուր
նահանգին կրօնական կրթական,
եղևական և ամուսնական ամեն
խնդիր պիտի մատակարարուին և
տնօրինուին պատկանեալ մարմին-
ներու կողմէ որք ուղղակի տառ-
նորդարանի իրաւասութեան տակ
կը գտնուին :

—Հանգուցեալ բարերար Պ.
Չանչեանցի հաւար Տիգրանակերտի
և Չարսանճագի մէջ մասնաւոր

Հոգեհանգիստ կատարուէր է ուր
ներկայ գտնուելու են նաեւ նոյն տե-
ղիւր որբերն ու որբանոցներու
Հոգաբարձութիւնները :

—Պատրիարքարանէ բաւական
թուով գրասարքեր և գրողական
այլ պիտոյքներ խրկուած են դա-
ւառական նպատակաւ գրողներու
և որբանոցներու :

—Օրմանեան Պատրիարքին ալ
այս անգամ վերջնական և անդառ-
նալի ըլլալու պայմանաւ հրաժա-
րած ըլլալը կիմացուի : մանրամաս
նութիւնք կը պակսին :

—Գահիրէէն մեզ կը գրեն. —
«Տեղւոյս Արարկերցի ազգայիննե-
րէն Տ. Սեդրակ Օտապաշեան որ
հեռագրի տնայէնի պաշտօնով վա-
տի —Հալֆա կը գտնուի և որ մի
ենոյն տան Գահիրէի Հայոց Որ-
բանոց ընկերութեան տնտեսապե-
տն է, ինպատ նոյն ընկերու-
թեան վատի Հալֆայի մէջ ձեռնար-
կած հանգանակութեան առաջին
արգելքը 24 Եգիպտական իրա-
ւակած է ընկերութեան գանձա-
պետին : Որբանոց ընկերութիւ-
նը կը յուսայ իշխալ անձնուէր
հայրենակցի շնորհիւ կարեւոր դու-
մարով մը օժտել իր գանձը : Ար-
գէն Արապկերի որբանոցին մէջ 10
որբեր (երեք Հայ գաւառներէն
պատկանող) որդեգրած և անոց
համար 30 Օսմանեան տակի խը-
կած է :

Այսօր իր զբաղմունքներէն տակ
իբր պահեստի ոչ նուած կարեւոր
գումար մըն ալ ունի :

ԳԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԳ

Ի նպաստ Ազգ. երկսեռ վարժա-
մանաց կազմակերպուած ձեռա-
գործաց վիճակահանութիւնը տե-
ղի պիտի ունենայ յառաջիկայ կի-
րակի, 15 հոկտ. յետ աւարտման
Ս. եկեղեցւոյ :

Հոգաբարձութիւնն այս առթիւ
կրկին կոչուած կրնէ արգոյ աղա-
նոց որ փութան գնել այդ տոմ.
սակներէն, որոնցմէ գոյացած հա-
տոյթը յառաջեալ է բազմաթիւ
որբ և ազգատ տղայոց կրթու-
թեան :

Ի դիմաց Հոգաբարձութեան
Ազգ. Երկ. վարժարանաց
վ. Ատենագարի Ատենագետ
Գ. Կիւրճեմարեան, Յ. ԲԱՎՄԱՍԵԱՆ

ԱԶԳ
ԵՐԿՍԵՆՈՐԻ ԸՆԿ. ՎԱՌՆԱՅԻ

Պատիւ ունինք յայտարարելու
թէ, ընկերութեան վեցամսեայ
լրացած ըլլալով, Բ. Ընդհ. Ժողով
պիտի դուրսբերէ Ազգ. վարժա-
րանի մէջ, Ժողովին օրակարգը պի-
տի ըլլայ հետեւեալն :

Ա. Ընդհ. Ժողովոյ Դիւանի ընտ-
րութիւն :

Բ. Գործ. Ժողովոյ վեցամսեայ
համարաւորութիւն :

Գ. Կանոնագրի ընտրութիւն և
վաւերացումն :

Դ. Գործ. Ժողովոյ ընտրութիւն
Ուստի կը խնդրուի ընկերու-
թեան արգոյ անդամներէն որ
ներկայս իբր հրաւեր ընդունելով
բարեհաճին ներկայ գտնուի ընդհ.
Ժողովին, յառաջիկայ կիրակի
Հոկ. 15ին, կէս օրէն գերլ ճիշդ
ժամը 3ին :

Մնամք յարգանք
Ի դիմաց Գործ. Ժողովոյ
Ատենագարի վ. Ատենագետի
Յ. ՃԱՆԿԻՆԻԼԵԱՆ Յ. ԲԱՐՍԱՄԵԱՆ
վառնա 9, Հոկտեմբեր 1900

դրութեան ու ուսուցման նոր եղանակով ու գործնա-
կան ոգով, շատ կը սիրուի իր սանիւնէն ու իր
տուած դասերը որոնք աւելի բարանայի լայն ծա-
նօթութեանց ու համագումար գաղափարներու արտա-
յայտութեանց վրայ կը կայանային քիչ ժամանակի
մէջ, կը ընդունին իր հոգեբանական ցիւցիլ յատկու-
թիւնները :

Իր այս աշխատանքներէն 4-500 դան-
կան ամառական կը շնչէր Գործակցին, որուն մէջ մա-
սով ինք կարգէր ու միւս մասը հայրենիք Սաւա-
մին ու Երուսաղէմին կը գրէր : Երկու տարի կանգնէ
այդ դրութեանը, սակայն Պոստը բաղադրաւ կեան-
քի բարեկեցիկութիւնը երբ տակաւ իր վարագուրած
աչքերուն առջեւ կը պարզուին, իրենց ներքին աշ-
խարհ մութ խաւերով ու երանգներով, անոր մի-
աւոր սիրտը իսպառ կը խաչիցեն այդ շարքում
ու չ'իմե՞ն, կեանքէն : Իր յիշէ իր հօրեղբոր վերջին
կտակը. «Ամանսն ու Երուսաղէմը չի մ'ունալ ու չու-
տով վաթան վերադառնալ» : Վճռապէս կորցէ թող-
նիկ մայրաքաղաքի փայլուն կեանքը, որ թերեւս
պազան աւելի յուսալից էր, երթալ հայրենիք
բնագուտի հոգին վրայ, իր խեղճ ազգակիցներուն
օգտակար ըլլալու անհնգով աշխատել : Այս նպատա-
կաւ կը գիտէ «Հայոց Միացեալ Ընկերութեանց»,
սիրով կը ընդունուի իր խնդիրքն և կը կալ գնէ զանի
նոյն բեկերու թեան «Սալմոնոյ Նրթարան»ին ու-
սուցիչ :

ԻԸ

1881 օգոստոսի առաջին եօթնեկին, Սալմոն-
ը ժամանէր Գործակցին : Մէկ քանի օրերը, զարդի
ներքին կարգադրութիւններով զբաղելէ ետք, վեր-
ջագէս իր սրտի աստիկ փափաք ու հոգեկան կարօ

տը քիչ մը յաղեցնելու համար, դեռ իր դասուան-
դութեանց շրջանած, կաճապարէ իր հայրենի գիւղը,
Պապեանական օճախին, Եսէն ճօրհորը այրի կ'ուն-
ուէր : Երուսաղէմին աչքերը :

Դեռ պատանի ս. բողոքովին անծանօթ կեանքի
դառնութեանց, եօթ տարի ուսով մեկնած էր այդ
գիւղէն, որուն սարին ու ձորերով իրենց խորհու-
ղով սուտակներով ու վտակներով օրօրս էին իր
մանկութիւնն ու պատանեկութիւնը : Եօթն երկուս-
տարիներէ վերջ, ճակատագրի ծանր քնահաճոյքով
մը իր սիրելի հօրեղբայրը օտար երկրի ու աստղե-
րու ներքեւ թաղելէ ետք, գրական փորձառու-
թեան լըջութեամբ, կեանքի առեղծաւորները այլ
եւս իրենց զգաւոր մը չ'ըլլալով, պարզ չինականի մը
պէս հանգարտ ու ծանրախոս իրենց գիւղը կը մը-
նէր Գործակցին, նոյնքան անկեղծ ու անձնաւոր, որ-
քան որ էր եօթ տարի առաջ :

Ամբողջ գիւղը, Սալմոն խաթունի ու Երուսաղի-
կի հեռ, որախ ու սրտաթունը կը գիտաւորին գինքը :
Սալմոնն ու Երուսաղիկը խելաւոր կը գրկեն ու կը փա-
րին անոր : Վերաւոր արտերը, ամենէն մեծ յուզ-
մանց վայրկեաններուն անգիմագրելի փղձկում մը
կուսնեան, որ մարդկային հոգեւոյ ներքին թելա-
գրութեան յայտարարն ու անցած գտնացած տանջող
ժամերու հաղադրութիւնն է : Սալմոն տանտիկինն
ու Երուսաղիկը թէ իրենց եօթն տարեան սիրական
զարկան կը համբաւեն և թէ կուրան : «Կանանց
կտրիճ արիւ ու գ' մատաղ եղին տատիկ, օրդիս, այն
հեռու որ աշխարհքէն մինչեւ Էստեղ ինչ որ քաղ-
ցիւր եկար, քոյ ոտքեր վեր իմ գլխին, իմ աչքե-
րուն դիմը : Ուր է քո խեղճ խօսքդ : Ծառիկը
քոյ փոխն երթայ : Էն զարիպ ու անաւոր մտեղէն
ի՞նչ խապրիկ մ'ունիս» : Սալմոն այս խօսքերն ու

հոգետանջ վիճակի բնական վիշաք՝ Գործակցին ալ
սիրտը շարժելով, ամբողջ խաւերին հետ կուրան :

Ինչպէս կեանքի մէջ շատ մը արտակարգ երե-
ւոյթներ տակաւ մոռացութեան կամ ընտելացման
հանգամանք կ'անեն, այսպէս ալ վշտեր, գառնու-
թիւններ ու տուայտանքը, եթէ ոչ իսպառ իրենց
հետք կը ջնջուի մարդու մտքի վրայէն, գէթ փոքր
աւ փոքր մոխրի ներքեւ ծածկուած կրակի կը նմանին,
որոց մակարդակը դուրսէն ուրիշները կը խաբէ ու
ներսէն իր ենթական կայրէ :

Գործակցին վիշաք թէեւ հետզհետէ առեւելոյթը
եղբայր կը նմանէր, բայց իր հոգեկան ներքին ցա-
ւը միշտ հոն էր, իր սիրտը Տիգրիսի գարնան յոյ-
ճանքին պէս, պղտորած ու փրփրած, որա-
խութեան ու հաճոյքի ոչ մի թումը անոր տեղա-
սուտութեան զէմ չէր գործեր :

Քանի որ որ միայն նա իրենց գիւղը, իր հօրե-
նական տան ծածքին տակ, իր արեւակիցներու ու
գրկիցներու մօտ իր կատարած արտերը քիչ մը հան-
գարեցաւ ու իր հոգեկան տանջանքները իրեննե-
րու ներկայութեամբ պղտոր ստեղծուին կրեց : Ալ
շատ հեռու չէր անկալ իր ծննդավայրէն, ամեն ան
գամ երբ ուսուցչական կեանքի միօրինակ ձանձրոյ-
թիւ կամ քաղքեան բարքերու անաւել յանձնու-
թիւնները իր պարզ սիրտն ու ինքնուրոյն կեանքի
անուշութիւնը վրդովելու ըլլային, 15-20 օր
ախգամ մը հոն կայցելէր ու իր սիրտն ու հոգին
գիւղական անուշ կեանքի ու մաքուր մթնոլորտի
մէջ կը կազդուէր :

ՂԱԶԱՐՈՍ Գ. ՆԱԶԱԳԵՏԵԱՆ

(Շարունակելի)

